

### ՏԵՍԻԼ ԽՆՆԵՐՈՐԴ

Գարեգին, Միհրանիկ և Յարօ

Գարեգին. — Ա՞՛, ի՞նչ կայ, Յարօ.  
ի՞նո՞ւ եկած ես, Միհրանիկ։

Յարօ. — Պարոն Գարեգին, տէր իմ,  
Միհրանիկը լալ կ'համայց ինձի՝ ող զինքը  
քեզ, մօս բերեմ։ լալէն չէր դապրեր...

Գարեգին. — Լաւ եկար, Յարօ. թո՛ղ  
հիմա ախտեղ Միհրանիկը, և առն զնա  
շուտով այս պարտամուրհակս դարձեալ Զնուտ  
Պատպային տուր, ո՛ւր որ գտնես զինքը տո՛ւք,  
և ըստ որ 1120 մանէթ հետն առած՝ այս  
զիշեր Ախլատիս պարտէզը զայ զիս գտնելու  
անպատճառ, լաւ իմացար։

Յարօ. — Շատ լաւ, տէր իմ. ան-  
պատճառ կու գանք Ախլատիս քեզ կը գրտ-  
նենք (կ'ելլէ)։

### ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Գարեգին և Միհրանիկ

Գարեգին. (կ'ոզէ մեկնի)։

Միհրանիկ. — Հայրիկ, ո՛ւր կ'եր-

թաս. Ախլատիս կ'երթաս. ես ալ կ'ուզեմ.  
ինձի ալ հետզ տար...

Գարեգին. — Միհրանիկի, զուն շեմ  
մրսիր, ես ինչի պիտի մրսիր. ես ալ կ'ու-  
զեմ հետզ գալ...

Գարեգին. — Չէ, Միհրանիկս, ճամ-  
րան երկայն է, զուն չես կարող գալ, ես  
շուտ պիտի երթամ։

Միհրանիկ. — Կարող եմ, հայրիկ.  
նայէ ի՞նչպէս կը քալեմ (կը վազվազէ և  
վար կ'իյեայ շալով, մինչ դժո Գարեգին  
սպասնակիաց ձեռով մնալ կը հրամայէ և  
կ'անենասնայ)։ Հայրիկ (շալով), հայրիկ...  
շի լսեր... թէ որ լաւ տեղ կ'երթայ հայ-  
րիկս ինչի ինձի ալ հետը չի տանիր...  
զիս չի սիրեր... Լիվատիս լաւ պարտեզ է.  
Սմբատ հօրեղբայրս միշտ զիս այնաեղ կը  
տանի ման կ'ածէ. ինձի անուշներ կը զնէ...  
ոհ, Սմբատ հօրեղբայրս շատ լաւ է, ինձի  
շատ կ'ուզէ, ես ալ իրեն կ'ուզեմ... ախ,  
ինչի Սմբատն իմ հայրս չէ... (Վարագոյրը  
կը գոցոսի)։

(Յարայարելի)

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ



Երեկայ տարւոյս Յարազի, Ասրիլ Զ'ին  
լոյս տեսած, 42երր (Nо. 4) համարն կ'ըն-  
ծայէ իւր ընթերցողաց հասուածիկ մը «Մա-  
տենախօսական» վերնագրով (1821. էջ),  
յորում «Վիճեննայի» (կարգաւ վեճենուից)։

մի զարմանար, lapsus calami և այդ,  
որոյ շարունակութիւն համարելու է անշաշտ-  
նակ յօդուածի վերջին մասը, յորում վի-  
պասանութեան վրայ կը խօսուի բազմավեպ  
հանդիսի մէջ արպած մի ընկարձակ քննու-  
թեան «կամ քննական յօդուածի վրայ հա-  
մառաւ խորհրդառնութիւն մի կ'ընէ։ Դայն  
յօդուածն, — եթէ կարելի է այդ անունը  
աալ այն մէկովէս էջ գրութեան, պան մե-  
ծագոյն մասը կը կազմէ «քաղաքածիքը Բազ-

1. Արքէ չեմ կարող հասկնալ թէ ի՞նչ կը նշա-  
նակէ հայերէն լեզուաւ գրուած յօգուածի մը  
մէջ յանկարծ եւրոպական տառ մը դնել, գի-  
տութեան թէ ագիտութեան արդիւնք է այդ։

մասէպից » , — առանց որ և է անուան կամ ստորագրութեան լինելով, ինչպէս են առ հասարակ բողոք միւս յօդուածներն նոյն համարին, բաց ի սրաբան իօրիկէն և Ե. Պատիանէն, շդիաեմ թէ ո՞րու հետ պատիւ ունիմ խսելու, որ ըստ այնմ չափեմ կամ կշամ խօսքերս, և ըստ այնմ ընդարձակեմ կամ ամփափեմ զուռթեան անմանը :

Հարի կը համարիմ սակայն կանիսաւ ըսել թէ, Պ. Յօդուածագիրն, ո՞վ ալ որ լինի, շատ ազնուութիւն ցոյց կու տայ իմ կարծիքը հերքելու միջոց անգամ, որու օրինակին կը հանան հետեւիլ — առանց բացառութեան և առանց իրենց նուասառութիւն համարելու — մեր լազգական ասպարիջին վրայ գրողներէն շատերն . մանաւանգ Արքագանցի այս տարուայ համարներէն միոյն մէջ ինքզինըը Մար-Ամադ ստորագրող յօդուածագիր մի, որ ամէն մէկ բարին մէջ — զորկ լինելով բաւական փաստերէ — անազնիւ օրտէ բոյսած դառնութիւն և կծութիւն զորս կը թափէր, իւր տկար յօդուածն անգամ լացնելու շափ... իմաստից խեղճութեան վրայ . Sunt lacrymae rerum !

Արդ զառնարավ Ջեզի, Պ. Յօդուածագիր, նախ և առաջ կը խնդրուի, որ անհատի մը առանձնական կարծիքը կամ սինալը — ինչպէս կ'ուզէք կոչեցէք զայն — բովանդակ Միհարանութեան մը շընծայէք, քանի որ յօդուածին գրողն դիտմասր նշանակեր էր իւր անունը. Ընդհակառակն, ձեր բոլոր իրաւանց մէջ պիտի լինէիք ընելու զայն, եթէ յօդուածն առանց ստորագրութեան լինէր, ինչպէս է ձերինն : Այդ ոճով եղրակացութիւն հանելն — կ'ըսեն արամարանք — իմաստակութեան տեսակ մ'է, շարաբանութեան (sylogismus) կանոնաց զանցառութիւն մի, որով մասնական իրէ ընդհանուր հետևանք մի հանել կ'ուզուի : Լաւագոյն չէր լիներ, Պ. Յօդուածագիր, եթէ մաքերնիդ այս կերպով բացարձիք, որով և իմաստակութեան արաւատէն զերծ կը լինէիք ըստ ամենայնի, ինչպէս որ կը համարիմ ես զջեզ. « Այս քաղաքածը բազմաէպից մենք առաջ բերինք այն նախասակով, որ ցոյց տանք, թէ ի՞նչ հայեացը (ունեն թէ ունի՞ն) ունի... Միւ-

թարեան հայերէն մին վիպասանութեան մասին » : Զեր ոճով պիտի չսխալէ՞ր արդեօք ընմերցողն, եթէ Տարագի նոյն համարին իօրիկի ֆէշիեռունը կարդարով, ուզէր հետեցընել թէ միւս բոլոր յօդուածներն ալ ընտիր և սրախօս են... իւրաքանչիւրին պէտք է հատուցանել իրեն պատշաճը և յատուկը :

Գալով յօդուածի վերջին և կարևորագոյն մասին, յօրում կ'ըսուի . Պ. Ալարքինութեան և չարուգնեան պայբարը, մանաւանդ վերջինի պատուիլը հին վիպասանութեան մէջ էր միայն ընդունած իրեւ բանաստեղծութեան անհրաժեշտ պայման (183 էջ) և, այսափ միայն բաւական կը համարիմ խորհրդածել, թէ Պ. Յօդուածագիրն ամեննին ու է է փաստ, պատճառաբանութիւն, վկայութիւն կամ հեղինակութիւն մէջ չի բերեր այդ իւր խօսը կամ կարծիքը հաստատելու համար. և չեմ յուսար թէ այնքան յասակինութիւն ունեցած լինի, որով իւր հեղինակութիւնը միայն բաւական փաստ համարի առ այդ : Կը գտնուին յիրափ այնպիսիներ որոնք օրինաւոր կը համարին իրենց այզպիսի պահանջ մ'ունենալ, բայց յայտնի է թէ մեր Պ. Յօդուածագիրն այլպիսիսաց կարգեն չէ : Սակայն իւր այդ բառերուն մէջ ո՞վ չի տեսներ « ex professo » վարդապետողի մը կերպարանքը, որ հին վիպասանութիւնը կ'որոշէ այժմեան վկայէն, անոնց իւրաքանչիւրին սահմանը և կանոնները կարծես կ'ուզէ ճշգել, գրեթէ ստիպիչ լինելու և ուսանողը բոնապատելու շափ... հեղինակութեամբ . մինչդեռ գիտութեանց և զականութեան ասպարիզին մէջ բացարձակ կերպով վարդապետելու գրութիւնն վերցուեցաւ. Պիթագորի անունն մոգուելու վրայ է, և « magister dixit » խօսըն այն բացարութեանց կարգը անցաւ, որոնք կարող են շարժել մարզուած ծիծաղը միայն՝ ո՞չ միտքը և ոչ համոզումը : Դարձեալ չեմ ուզէր կարծել թէ Պ. Յօդուածագիրն, այս տեղ, այդ մի քանի իսկակերով ուզէ հաստատել, իւր թէ գրականութեան մէջ, իւրաքանչիւր հեղինակի զրյին ներքեւ, ըստ այլայլ կիմայլոց կամ քանաճոյից, կամ արիներուն զրդելով՝ փոփոխին նաև գրականութեան սահմաններ, պայմանքա կանոնք:

հիմնական յատկուրինք, և այն։ իրաց էութիւնը ով չգիտեր թէ անփոփոխ են, ինչպէս կ'ուսանիմք իմաստափռութեան մէջ, թէ և պատահական կամ երկրորդական պարագայը կը փոփոխին։ այսպէս և նաև գեղարուեստից մէջ։ էական պայմանը կամ ուրենք չեն փոփոխիր, թէ և դրութիւնք, ձեզ, զաւոց խառնուրդյ կամ աստիճանաւորութիւնք, բացարութեան կերպն, և այն, կարող են փոփոխիլ ըստ ճարտարութեան կամ բնաւորութեան արուեստաւորին։

Այ ֆափաքէի յիրաւի որ Պ. Յօդուածագիրն փառուեր մէջ բերած լինէր այս իմ սխալ կարծիքը հերցելու համար. շատ շնորհակալ պիտի լինէի իրեն, զի այն ասեն ինձ ուրիշ բան չէր մար ընել՝ բայց միայն խախտել անոր ապացոյցները, ատպալել իրեն ուղիղ կարծուած կարծիքին հիմը, որով իմաստիքի վրայ կանգուն պիտի մայր։ Այս մասին կ'ուզեմ ես այլ իրեն նմանիլ, գեթ այս անզամ, այսինքն է՝ համաստի և վերիվերոյ անցնիլ, առանց լիպասանութեան արուեստին խորերը մտնելու, անոր այլի այլ դրութիւնները որոշելու և անոնց զանազանութիւնները յիշելու, գողափարական (idéaliste), հոգեբանական (psychologique), բնապաշտ (naturaliste), իրապաշտ (réalistes) կոչուած զգրոցները, մանաւանդ յետինքս, որը ներկայապէս ընդհանրացեր և տիրապետեր են շատին կրուուած զրականութեան մէջ, ինչպէս աեղ մը կ'ակնարկէ հոչակաւորն Մելաքիօր կը վազիւէ խորացի նշանաւոր Գարր. Դ. Աննանցիոյ լիպասանին վրայ գրած մէկ քննական յօդուածին մէջ։ Բաւական կը համարիմ յիշել միայն յանուանէ մի քանի փոանիկ հեղինակներ, որոնց աւելի ծանօթք են ազգերնուու զրագէտ մասին իրենց գրութեամբ և նպաստաւոր իմ կարծեաց, ինչպէս են կարող լինել լըդրան և այլք, և վերջերս դրլափու, իւր

մէկ դրութեամբը ֆիկարոյի և մէջ, որ իւր տեսակին մէջ աննման է և — վերջին խօսք մը այլ և կը կնքեմ գրութիւն։

Այս, Պ. Յօդուածագիր, « այժմեան վէպը (իրական պարոցը կը հասկնաց անշուշտ) ձեզ տում է՝ (թէ և միշտ չի յաջողում)՝ լինել մարդկային կեանքի նշգրիտ պատկերը », ասկայն պէտք է դիմակ, թէ իմ խօսքը — Հորիզոնի վրայ գրածս միշոց — ընդհանուր վէպի մասին չէ, այլ յատկապէս « Ցաւագարի » մասին, յորում — ինչպէս Դուռ ևս կը խստովանիք և հեղինակն այլ կարևոր զատեր է — « այնպէս էր պահանջում » (ձեր խօսքերն են, ձեր բացատրութիւնն է) վէպի մեզ նկարագրուած երեսիմի հոգեբանական կողմը։ Եթէ հոգեբանականը չը պահանջէր, վէպը այնպէս էլ չէր վերջանար։ Ապա ուրեմն անհրաժեշտ էր որ ռ այնպէս վերջանար » այդ վէպն, այդ գէպքն, այդ պատմութիւնն, ինչպէս կ'ուզէք՝ կոչեցէք զայն, որովհետեւ այն պարագայից մէջ, ինչ կերպով որ կը ներկայացնէ մեզ հեղինակն, « այդպէս էր պահանջում վէպին հոգեբանական կողմը »։ հետևաբար, բերի պիտի ըլլար այդ վէպն ըստ արուեստի գրութեան, անքանական պիտի ըլլար, և զուրի բարդացական ուժէ, եթէ այն կերպով չի վերջանար։ իմ բացատրութեանս մէջ կը պակսուի միայն հոգեբանական խօսքն, ապա թէ ո՛չ կարծեմ, Պ. Յօդուածագիր, շատ չեն տարբերիր իրարէտ մեր կարծիքներն, վասնի « mutato nomine », ինչպէս կ'ըսէ առածն, նոյն եղանակացութեան և նոյն հետևանաց կը յանդին մեր խօսքերն։ Ապա ուրեմն, իմ միտքս այն չէ, ինչպէս կ'ուզէք հասկնալ, թէ « հեղինակին կամքով առաքինութիւնը յաղթեր է » (որ թերեւ և ոչ գրողին մաքէն անցեր է), ո՛չ, այլ իրն, պարագայը, դիմակցութեան ձայնն այնպէտ կը պահանջէին և հեղինակն այլ այնպէտ ներկայացացեր է մեզի։

1. Caro, Poètes et romanciers.

2. G. Pellissier, Le mouvement littéraire au XIX<sup>e</sup> siècle.

3. E. Lefèvre, Traité théorique et pratique de

littérature. — J. Demogeot, Histoire de la littérature française, etc.

4. Figaro, 1885, N.<sup>o</sup> 124. Jules Delafossé, Souvenirs et mémoires.

« Զարանենք պարսկուհին պատժիլլ » և կամ շարութեան իրեն հատուցումը զանելն՝ այդ այնշափ բնական էր, որ անհրաժեշտ կը պահանջուէր որ այնպէս լինէր. բայց « զիժ Դանիելի » ձեռքով լինելն՝ այդ բորբովին պատահական բան մ'էր : Առ այժմ այշափը բաւական կը համարիմ, խոսանալով ուրիշ թերթիւ աւելի խոր կերպով և աւելի մօտէն շօշափել այս խնդիրը, առիթ ունենալով գրել այժմեան վէպերու մասին : — Ընդհանրապէս

լրագրական ասպարիցին վրայ յաճախ երեւ ցողաց միակ թերութիւնն է թերեւս, շատ ժամանակ չունենալով հառու կերպով խոր հրդածելու, զիել « currente calamo », ինչպէս կ'ըսեն լատինք : Հետեաբար պէտք չէ զարմանալ, մանաւանդ թէ ներելի է, եթէ մերթ ընդ մերթ պննց զրովթեանց մէջ « lapsus mentis » պատահելու լինին :

Հ. Յ. Թ.

## ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք



Ն Ա Խ Ա Ն պատմութեան մէջ շրկայ առաւել զարմանալի և հետապրըրական քան զքննութիւն բարուց և գործոց մեղուաց : Որպիսի՞ աշխուժութիւնն, ճարտարութիւնն, կարգաւորութիւնն, աշխատաիրութիւնն, և ներդաշնակութիւնն կը տեսնուի այս բազմախումը միջատաց մէջ : Որը կը ժողինն ի ծաղկանց անոշահամ և պիտանի նիմիերը, և կը չնջեն իրենց ընկերութենէն զանոնք որ անպիտան են և ապստամք, կերող և ոչ աշխատող :

Սողոնին իմաստուն ծովերուն օրինակ կը բերէ մրջիւնը, ըսելով « Երթ վաս առ մրց ջիւնն » . վասն զի ամարան մէջ հազարաւորդ ի միասին կ'աշխատին անզագար՝ համբարել իրենց պաշարը ձմերան համար : Բայց ես լրաւագոյն օրինակ կը համարիմ մեղուն : վասն զի մրջիւնը միայն իր անձին օգտակար է և վխասակար մարդոց, անոր համար կը ջանամք հալածել մեր համբարանոցներէն . ոչ այսպէս է մեղուն, թէ անձին և թէ մարդոց օգա

տակար, և իր անխոնջ աշխատսիրութեամբ մեզ օգինակ :

Հին ժամանակաց հետէ ֆիլիսոփայք և պարակագէտց պարապեալ են մեղուաց վրայ : Բայց անոնցմէ շատերը, ինչպէս նաև Ալիստոնէլ և Վիրգիլիո, անդէտք էին մեղուաց ներքին կազմածոյն և ծննդեան կերպին . և իրենց զրուածոց մէջ կը նկատի ճշմարտութեանց հետ նաև շատ վիրապակներ : Պահնեալ էր այս գիտութեանս յառաջադիմութիւնը Սուամմերդամի (Swammerdam) հոլանտացոյ, Մերալուոյ, Ռէումենի, Փրանկիսկոս Հուգեր (F. Huber), հերուտացոյ, և Կոլին (Collin) քահանային :

Հուգերի մեղուաց վրայ ըրած գիտողութիւնները շատ նշանաւոր են . և իր գիտածները թարգմանուած են եւրոպական վիճակոր ազգերէ : Իր գիտողութեանց գիխաւորներէն զուման յիշատակեմք : Առաջինն է, բեղնաւորութիւնն մայր մեղուի յօսս : Դրավ (Draw) կը կարծէր թէ որձ մեղուներն ձկներու պէս կը բեղնաւորեն իդին ձուերը, ոռոգելով զնոսա A.R.A.R. @